Հավելված N 1
ՀՀ կառավարության 2018 թվականի
հունիսի 28-ի N 736 - Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՄՐԱՑՎԱԾ ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ՀԱՇՎԵԿՇՌՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2003-2007 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ «ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱԿԱՆ ԽՆԱՄԱԿԱԼԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻՆ» ԾՐԱԳՐԻ ՄՆԱՑՈՐԴ ՀԱՇՎԱՌՎԱԾ ԳՈՒՅՔԸ ՈՐՊԵՍ ԲՆԱՀԻՐԱՅԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

1. Սույնով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) ենթակայության բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն (երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն կամ մանկատուն) հանդիսացող պետական ոչ առևտրային կազմակերպությունների (այսուհետ՝ կազմակերպություն) վերանվանման կամ վերակազմակերպման արդյունքում ազատված՝ դրանց նոր գործառույթների իրականացման համար ոչ անհրաժեշտ գույքը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության 2003-2007 թվականների պետական բյուջեների «Պետական աջակցություն Հայաստանի Հանրապետության մանկական խնամակալական կազմակերպությունների շրջանավարտներին» ծրագրով նախատեսված միջոցների շրջանակներում ձեռք բերված և չօգտագործված մնացորդ գույքը, որպես բնաիրային օգնություն (այսուհետ՝ բնաիրային օգնություն), Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունիսի 4-ի N 582-Ն որոշման 4-րդ կետով սահմանված տարածքային մարմինների (այսուհետ՝ տարածքային մարմին) միջոցով կազմակերպությունից ընտանիք տեղափոխված երեխաների ընտանիքներին տրամադրելու կարգն ու պայմանները (այսուհետ՝ կարգ):

2. Սույն կարգի դրույթները չեն տարածվում այլ իրավական ակտերով կարգավորվող բնաիրային օգնության տրամադրման հետ կապված հարաբերությունների վրա:

3. Բնաիրային օգնությունը տրամադրվում է անձին (ընտանիքին, այլ սոցիալական խմբին)՝ հիմնական պահանջմունքները և սոցիալական կարիքները բավարարելու (կյանքի դժվարին իրավիճակը կանխարգելելու և (կամ) հաղթահարելու) նպատակով՝ հիմք ընդունելով անձի (ընտանիքի) գնահատված կարիքները:

4. Տարածքային մարմինը Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1044-Ն որոշման հավելվածի 7-րդ կետով սահմանված կարգով կազմակերպությունում բնակվող երեխայի ընտանիք վերադարձնելու հնարավորության մասին տեղեկությունն ստանալուց հետո ձեռնարկում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1061-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) N 1 հավելվածի 3-14-րդ կետերով նախատեսված լիազորությունների իրականացումը:

5. Տարածքային մարմինը որոշման N 1 հավելվածի 12-րդ կետով սահմանված անհատական սոցիալական ծրագրերում նկարագրված գույքային կարիքների հիման վրա կազմում է անհրաժեշտ գույքի հայտ-պահանջագիր՝ դրանում ներառելով գույք ստացող ընտանիքի չափահաս անդամներից մեկի (այսուհետ՝ շահառու) ազգանունը, անունը, հայրանունը, բնակության վայրը, պահանջվող գույքի անվանումը և քանակը, հայտ-պահանջագրին կից ներկայացնում քաղվածք տվյալ ընտանիքի համար կազմած անհատական սոցիալական ծրագրից՝ ընտանիքի գույքային կարիքի, այն հիմնավորող հանգամանքների և առաջարկվող բնաիրային օգնության նկարագրության մասով:

6. Տարածքային մարմինների կողմից կազմված հայտ-պահանջագրերը Հայաստանի Հանրապետության մարզպետը (Երևանի քաղաքապետը) ներկայացնում է նախարարություն:

7. Նախարարությունը յուրաքանչյուր ամսվա առաջին 5 աշխատանքային օրերի ընթացքում ամփոփում է նախորդ ամսվա ընթացքում ստացված հայտ-պահանջագրերը, դրանք համադրում առկա բնաիրային օգնության հետ և հանձնման-ընդունման ակտի հիման վրա նախարարությունից կամ կազմակերպությունից կատարում Հայաստանի Հանրապետության մարզպետին (Երևանի քաղաքապետին) համապատասխան հատկացումներ:

8. Բնաիրային օգնության տեղափոխումը շահառուի բնակության վայր կազմակերպում է Հայաստանի Հանրապետության մարզպետը (Երևանի քաղաքապետը):

9. Բնաիրային օգնության տրամադրումը շահառուին իրականացնում է համապատասխան տարածքային մարմինը՝ բնաիրային օգնությունն ստանալու մասին ստացականի հիման վրա:

10. Ստացականում ներառվում են՝

1) շահառուի անունը, ազգանունը.

2) անձը հաստատող փաստաթղթի տվյալները, բնակության հասցեն, հետախուսահամարը.

3) տրամադրվող բնաիրային օգնության անվանումը, քանակը, ինչպես նաև օգտագործված լինելու կամ չլինելու մասին տեղեկությունը.

4) ստորագրությունները՝ տրամադրող տարածքային մարմնի պատասխանատու աշխատողի և շահառուի.

5) ստացականը շահառուի կողմից ստորագրելու օրը, ամիսը, տարեթիվը:

11. Ստացականը կազմվում է երկու օրինակից, կնքվում է տարածքային մարմնի ղեկավարի կողմից, որից մեկը պահպանվում է շահառուի սոցիալական գործում, իսկ մյուսը՝ տրամադրվում է շահառուին:

12. Սույն կարգի 8-րդ կետով սահմանված տեղափոխումից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետության մարզպետը (Երևանի քաղա-

քապետը) նախարարությանն է տրամադրում տեղեկատվություն՝ բնաիրային օգնությունը շահառուներին տրամադրելու մասին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2018 թվականի
հունիսի 28-ի N 736- Ն որոշման

Ց Ա Ն Կ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ՀԱՇՎԵԿՇՌՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2003-2007 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ «ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱԿԱՆ ԽՆԱՄԱԿԱԼԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻՆ» ԾՐԱԳՐԻ ՄՆԱՑՈՐԴ ՀԱՇՎԱՌՎԱԾ ԳՈՒՅՔԻՑ՝ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ (ԵՐԵԽԱՆԵՐԻ ԽՆԱՄՔԻ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԳԻՇԵՐՕԹԻԿ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՆԿԱՏՈՒՆ) ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՆՎԱՆՄԱՆ ԿԱՄ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԸՆՏԱՆԻՔ ՏԵՂԱՓՈԽՎԱԾ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՈՐՊԵՍ ԲՆԱՒՐԱՅԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԳՈՒՅՔԻ

NN ը/կ	Գույքի անվանումը և մակնիշը	Չափի միավորը	Քանակը	Միավորի գինը (դրամ)	Գումարը (դրամ)
	Սարքեր և սարքավորումներ				
1.	Գազօջախ «Misirli»	հատ	4	88800	355,200.00
2.	Գազօջախ «SUPER GENERAL»	հատ	20	82800	1,656,000.00
3.	Գազօջախ «SUPER GENERAL»	հատ	26	96750	2,515,500.00
4.	Գազօջախ «SUPER GENERAL»	հատ	21	88140	1,850,950.00
	Ընդամենը		**71**		**6,377,650.00**
	Կենցաղային կահույք				
1.	Աթոռ	հատ	54	7000	378,000.00
2.	Աթոռ	հատ	166	7400	1,228,400.00
3.	Բազմոց՝ երկտեղանոց	հատ	15	44500	667,500.00
4.	Բազմոց՝ երկտեղանոց	հատ	27	40000	1,080,000.00
5.	Ներքնակ՝ մահճակալի	հատ	37	10000	370,000.00
6.	Խոհանոցի կահույքի լրակազմ				
	այդ թվում՝				
6.1.	պահարանիկ	հատ	39	20000	780,000.00
6.2.	պահարանիկ	հատ	29	18000	522,000.00
6.3.	խոհանոցի կահույքի լվացարան	հատ	23	16800	386,400.00
6.4.	խոհանոցի կահույքի լվացարան	հատ	27	15200	410,400.00
6.5.	խոհանոցի կահույքի լվացարան	հատ	21	16300	342,300.00
6.6.	կախովի պահարան	հատ	19	27200	516,800.00
6.7.	կախովի պահարան	հատ	14	24800	347,200.00
	Ընդամենը				**7,029,000.00**
	Ամբողջը				**13,406,650.00**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

18_0736

Հավելված N 3
ՀՀ կառավարության 2018 թվականի
հունիսի 28-ի N 736 - Ն որոշման

Ց Ա Ն Կ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ՀԱՇՎԵԿՇՌՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2003-2007 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ «ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵ-ՏՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱԿԱՆ ԽՆԱՄԱԿԱԼԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱ-ՆԱՎԱՐՏՆԵՐԻՆ» ԾՐԱԳՐԻ ՄՆԱՑՈՐԴ ՀԱՇՎԱՌՎԱԾ ԳՈՒՅՔԻՑ «ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐԻՏԱՍ» ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐԱԲԵՐՎՈՂ ԳՈՒՅՔԻ

NN ը/կ	Գույքի անվանումը և մակնիշը	Չափի միավորը	Քանակը	Միավորի գինը (դրամ)	Գումարը (դրամ)
	Սարքեր և սարքավորումներ				
1.	Գազօջախ «SUPER GENERAL»	հատ	1	96750	96,750.00
	Ընդամենը				**96,750.00**
	Կենցաղային կահույք				
1.	Աթոռ	հատ	26	7000	182,000.00
2.	Բազմոց՝ երկտեղանոց	հատ	5	44500	222,500.00
3.	Ներքնակ՝ մահճակալի	հատ	10	10000	100,000.00
4.	Խոհանոցի կահույքի լրակազմ				
	այդ թվում՝				
4.1.	պահարանիկ	հատ	1	20000	20,000.00
4.2.	պահարանիկ	հատ	1	18000	18,000.00
4.3.	խոհանոցի կահույքի լվացարան	հատ	1	16800	16,800.00
4.4.	կախովի պահարան	հատ	1	27200	27,200.00
4.5.	կախովի պահարան	հատ	1	24800	24,800.00
	Ընդամենը				**611,300.00**
	Ամբողջը				**708,050.00**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

18_0736

Հավելված N 4
ՀՀ կառավարության 2018 թվականի
հունիսի 28-ի N 736 - Ն որոշման

Ց Ա Ն Կ

«ԵՐԵԽԱՅԻ ԵՎ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱՋՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆՆ ԱՄՐԱՑՎԱԾ ԵՎ ՎԵՐԱԿԱՋՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԿԱՋՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՈՉ ԱՆՀՐԱԺԵՇՏ՝ ՀԵՏ ՎԵՐՑՎՈՂ ԵՎ «ՎԱՐԴԵՆԻՍԻ ՆՅԱՐԴԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՏՈՒՆ-ԻՆՏԵՐՆԱՏ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱՋՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆՆ ԱՄՐԱՑՎՈՂ ԳՈՒՅՔԻ

NN ը/կ	Գույքի անվանումը և մակնիշը	Չափի միավորը	Քանակը	Միավորի գինը (դրամ)	Սկզբնական արժեքը (դրամ)	Մնացորդային հաշվեկշռային արժեքը (դրամ)
	Սարքեր և սարքավորումներ					
1.	Սառնարան-պահարան	հատ	1	200,000.00	200,000.00	0.00
2.	Սառցախցիկ	հատ	1	175,000.00	175,000.00	44,552.00
3.	Խոհանոցի էլեկտրական ջեռոց ՕԿ	հատ	1	17,427.00	17,427.00	0.00
4.	Լվացքի մեքենա LG 7 կգ-ոց	հատ	2	160,000.00	320,000.00	0.00
5.	Լվացքի մեքենա	հատ	1	85,000.00	85,000.00	0.00
6.	Երշիկ կտրելու սարք	հատ	1	25,460.00	25,460.00	10,371.00
7.	Սպասք լվանալու մեքենա	հատ	1	120,000.00	120,000.00	73,320.00
	Ընդամենը				**942,887.00**	**128,243.00**
	Կենցաղային կահույք					
1.	Մահճակալ	հատ	50	70,000.00	3,500,000.00	356,417.00
2.	Մահճակալ	հատ	14	59,000.00	826,000.00	240,327.00
3.	Մահճակալ	հատ	9	62,889.00	566,001.00	230,551.00
	Ընդամենը				**4,892,001.00**	**827,295.00**
	Ամբողջը				**5,834,888.00**	**955,538.00**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

18_0736